խող վաճառականներ, որոնք իրենց ապրանքները բաց էին թողնում գնորդ բանվորներին ոչ թե կանխիկ վճարման դիմաց, այլ մեծ մասամբ վարկով, ի հաշիվ ստանալիք աշխատավարձի, իհարկե գների վրա մեծ տոկոսներ բարձելով։ Սրանք արդեն անցած էին իրենց կապիտալի շահագործման երկրորդ փուլին։ Երբեք չհրաժարվելով գործունեության նախկին ձևից, սոսկ տոկոսի վերադրումից, դրամատերը հանձն էր առնում նաև առևտրական միջնորդի դեր, մասնակցելով ներմուծվող և արտահանվող ապրանքների շրջանառությանը։ XX դ. երկրորդ տասնամյակում, սովետական իրավակարգի հաստատումից անմիջապես առաջ, մանր կապիտալի այս միջնորդական դերը արդեն գերակշռող էր դարձած։ Մանր կապիտալի գործադրության այդ երկու փուլերը՝ թե՛ զուտ վաշխառուականը և թե՛ միջնորդ առևտրականը, վառ գծերով պատկերված են մեր գեղարվեստական գրականության մեջ և մասնավորապես Ակսել Բակունցի «Անավարտ էջերի» «Կարմրաքար» վեպի մեջ։ Վիպասանը գունեղ ներկերով նկարում է երկու փուլերի, իրար հաջորդած երկու կապիտալիստ սերունդների ներկայացուցիչների կերպարները։ Առաջին սերունդին պատկանում է հայրը՝ խոջա Հիբանը իր կոպիտ, ոչնչով չքողարկված գիշատիչ մերկությունով, մյուսին՝ ավելի քաղաքակիրթ, արտաքուստ ավելի մեղմությամբ քողարկված՝ նրա զավակները՝ Եփրեմն ու Մկրտումը, որոնք խանութ էին պահում, ռուսերեն ցուցանակով՝

Мелочная лавка бр. Мангасаровых...[34].

Այսպես է բնորոշվում հայրը, խոջա Հիբանը.

«Խոջա Հիբանի տունը գտնվում էր գյուղի վերին թաղում։ Նրա «ամարթից» վերև տուն չկար։ Տան շորս բոլորը բարձր ամուր պարիսպներ, պարիսպների տակ ցածր կտուրով զանազան կառուցվածքներ էին՝ գոմ, մարագ, ախոռներ, փարախ, ամբարներ և այլն։ Հրապարակի կենտրոնում երկհարկանի տուն էր։

«Երկրորդ հարկի երեք սենյակներից մեկը՝ ամենափոքրը պատուհան էլ չուներ և ցերեկով կիսամութ էր ներսում։ Այդ սենյակումն էր պահում խոջան իր ունեցածը՝ գորգերի և խալիների կույտը, արծաթեղենը, կնոջ զարդերը, թանկագին մորթիներ... Այդ սենյակումն էր և պղնձե մեծ սամավարը, որի մեջ Հիբանի թաղումից հետո գտան մինչև ունկերը լիքը արծաթե փայլուն աբասիներ։ Խոջա Հիբանը այդ սենյակումն էր պահում փոքրիկ գունավոր թիթեղներով պատած սնդուկը, որի մեջն էին սանադնէրը[35]։ Երբ մեկը ներս էր մտնում պարտքը տալու, խոջան սիրալիր ժպտում էր։ Սկսվում էր հաշիվը։ Ամեն մի կոպեկ տնտղում էր, նայում էր գրին ու նշանին, եթե թղթադրամ էր՝ ծնկան վրա էր դնում, ծալքերը հարթում բութով և ցուցամատով տրորում... Եվ հաշվի չէր առնում, որ պարտապանը անցյալ տարի երկու օր նրա համար խոտ էր հարել, հարսը մի քանի օր բուրդ էր լվացել նրանց տանը։

«Խոջա Հիբանը առևտուր էլ էր անում, բարդաններով բուրդ էր հավաքում և ուղտերին բարձած ճանապարհ գցում քաղաք իր ծանոթ վաճառականին հանձնելու։ Գերան էր ծախում, գարնան սկզբին փող էր բաշխում և աշնանը փողի դիմաց վերցնում մսացու, բուրդ, ոչխար, պանիր...

Եվ ընդարձակվում էին «Հիբանի հողերը»...

Հիբանին հաջորդեցին իրա զավակները՝ Եփրեմն ու Մկրտումը։

---

[34] Մանրուքի խանութ եղբայրներ Մանգասարովների։

[35] Մուրհակները։